Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հաղորդակցման դերը կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործընթացում

Ուսուցիչ՝ Բաղալյան Լիլիա

Ղեկավար՝ Միրզոյան Թամարա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1. Հաղորդակցումը որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության միջոց---------- 5

ԳԼՈՒԽ 2. Ճիշտ հաղորդակցվելու առանձնահատկություններն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում---------- 9

Եզրակացություն---------- 13

Օգտագործված գրականության ցանկ---------- 15

Ներածություն

Յուրաքանչյուր մարդու կյանքում կարևորագույն խնդիրներից մեկը մարդկանց հետ ճիշտ հաղորդակցվելն է, շփման մեջ անկաշկանդ լինելը: Որտեղի՞ց է սկսվում մարդու զարգացումը, իհարկե ընտանիքից, շրջապատից և գլխավորը՝ դպրոցից: Երեխաները կարող են դեռ մանկուց չունենալ շփման հետ կապված խնդիրներ, լինել անմիջական և հեշտ հարմարվել միջավայրին, սակայն շատ դեպքերում հանդիպում ենք լրիվ հակառակ իրողությանը, երբ երեխան ինքնամփոփ է, դժվար է շփման մեջ մտնում նույնիսկ իր հասակակիցների հետ և առաջին անգամ դպրոց մտնելիս մի շարք դժվարությունների է հանդիպում: Այստեղ շատ կարևոր է ընդգծել ուսուցչի դերը, նա կարող է լինել հենց այն մարդը, որը կփոխի տվյալ երեխայի բնավորությունը, կսովորեցնի նրան շփվել մարդկանց հետ, արտահայտել իր կարծիքը: Հենց այս իմաստով դպրոցը կարող է անկյունաքարային նշանակություն ունենալ նման երեխաների կյանքում:

Ինչ վերաբերում է անմիջական և աշխույժ երեխաներին, ապա նրանք ավելի հեշտությամբ կկարողանան հաղորդակցվել և՛ իրենց ուսուցիչների, և՛ համադասարանցիների հետ: Այս պարագայում էլ ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի նման երեխաների վարքին և դասարանում այնպիսի մթնոլորտ ստեղծի, որ այդ շփումը չանցնի սահմանները, կարգուկանոնը պահպանվի և դասն ընթանա իր բնականոն ընթացքով:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր ուսումնասիրության առարկան հաղորդակցման դերն է կրտսեր դպրոցականի անձի զարգացման գործընթացում, իսկ նպատակն է ցույց տալ այն դժվարությունները, որոնք առաջանում են հաղորդակցման ընթացքում և մատնանշել այն հիմնական մեթոդները, որոնցով դասն անցկացնելու դեպքում ուսուցիչը կարող է աշակերտների մեջ սերմանել ճիշտ արժեքներ և արդյունքներ գրանցել:

Հետազոտության խնդիրները: Պետք է բացահայտվեն այն հիմնական խնդիրները, որոնք ունենում են հիմնականում կրտսեր

դպրոցականները միմյանց հետ շփման ընթացքում և հնարավորինս ճիշտ ձևերով փորձել նրանց տալ այնպիսի գիտելիքներ, որոնք կօգնեն ճիշտ հաղորդակցվել:

Արդիականությունը: Շփումն ու հաղորդակցությունը յուրաքանչյուրի օրվա անբաժանելի մասն են, եթե չկարողացար դրանց առանձնահատկություններին տիրապետել, ապա չես կարողանա քո տեղը գտնել կյանքում և առաջ գնալ: Այժմ բավականին մեծացել է այն երեխաների թիվը, որոնք իրական շփման փոխարեն նախընտրում են օնլայն շփումը, որն էր իր հերթին բերում է ինքնամփոփության և որն էլ կարող է հանգեցնել հոգեբանական լրջագույն խնդիրների: Ուստի այս ամենից խուսափելու համար միակ միջոցը դպրոցն է, այնտեղ գաղափարապես ճիշտ ձևավորվելը: Այս թեման ինչպես նախկինում, այժմ առավել ևս արդիական է և գտնվում է բոլորի ուշադրության կենտրոնում:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Հաղորդակցումը որպես կրտսեր դպրոցականի դաստիարակության միջոց

Ուրիշին հասկանալու ամենակարևոր միջոցը նրա հետ շփումն է: Հաղորդակցության միջոցով մարդիկ կազմակերպում են տարբեր տեսակի գործնական և տեսական գործունեություն, փոխանակում են տեղեկատվություն, հասնում են փոխըմբռնման, մշակում գործողությունների համապատասխան ծրագիր և փոխադարձ ազդեցություն են ունենում միմյանց վրա: Հաղորդակցության գործընթացում ձևավորվում, դրսևորվում և իրականացվում են միջանձնային հարաբերությունները[1]:

Մեր ժամանակներում մեծ ուշադրության է արժանանում կրտսեր դպրոցական տարիքը, քանզի այն համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ: Կրտսեր դպրոցական տարիքում առաջատար է դառնում նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերումը, ինտենսիվորեն զարգանում և փոխվում են ճանաչողական գործընթացները՝ հատկապես մտածողությունը և հաղորդակցման հմտությունները: Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվում են կայուն պահանջմունքներ ու հետաքրքրություններ, համարժեք ինքնագնահատական, զարգանում են ինքնավերահսկողության ու ինքնակարգավորման հմտություններ, իր և այլոց նկատմամբ քննադատական վերաբերմունք:

Կրտսեր դպրոցականների զարգացման մեջ էական նշանակություն ունեն ուսուցիչները և դասերն անցկացնելու նրանց մեթոդները: Աշակերտների դպրոց մտնելու հենց առաջին օրվանից պետք է կարողանալ նրանց հետ ճիշտ հաղորդակցվել, համապատասխան բառեր ընտրել՝ նրանց նոր միջավայրին ադապտացնելու համար: Այդ տարիքում երեխաներն ավելի էմոցիոնալ և խոցելի են, ուստի, եթե նրանց հետ ճիշտ աշխատանք տարվի, ապա նրանց կյանքի հետագա զարգացումն ավելի հեշտ կընթանա: Լինում են տարբեր բնավորությունների տեր երեխաներ,

[1] Коноваленко, М. Ю. Теория коммуникации : учебник для бакалавров, Москва, 2023

որոնցից յուրաքանչյուրի հետ պետք է անհատական աշխատանք տանել, դրա համար բացի մանկավարժական գիտելիքները, ուսուցչին անհրաժեշտ են նաև հոգեբանական բավարար հմտություններ: Դասարանում համապատասխան միջավայր ստեղծելը, դասընկերների հետ շփման կազմակերպումը հենց այն սկզբնական գործողություններն են, որոնք պետք է անի ուսուցիչը:

Հաղորդակցման մեջ կարևոր է նաև երեխաների փոխհարաբերություններ կառուցելու կարողությունները դասընկերների հետ: Դա հնարավորություն է տալիս շփման մեջ լինել ակտիվ, չվախենալ, առաջինը սկսել շփումը անծանոթ երեխաների հետ, ուսուցչի հետ: Հաղորդակցական կարողությունների ձևավորման և համագործակցության համար շփումը հանդիսանում է հիմք: Հասակակիցների հետ հաղորդակցումը երեխաներին տալիս է այն, ինչ սկզբունքորեն չի կարող տալ մեծահասակների հետ հաղորդակցությունը:

Կարևոր է ուսուցչի հետ հաղորդակցությունը: Ուսուցչի հետ հաղորդակցումը մեծ ազդեցություն է թողնում կրտսեր դպրոցական աշակերտի վրա: Ուսուցիչը կարող է օգնել երեխային հաղթահարել խնդիրները և դժվարությունները, կարելի է ասել, որ, եթե երեխան վստահելի հարաբերություններ ունի ուսուցչի հետ, ապա կրթության և վարքային խնդիրները կլուծվեն: Ընդհանուր առմամբ տարրական դպրոցի ուսուցիչը մեծ ազդեցություն ունի կրտսեր դպրոցականի անհատականության ձևավորման վրա: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքն իր անձի վերաբերյալ: Շատ կարևոր է նաև կրտսեր դպրոցականին թույլ տալ արտահայտել իր կարծիքն ու տեսակետն այս կամ այն հարցի վերաբերյալ, քանզի այդ պարագայում նա իրեն ավելի վստահ կզգա և չի վախենա իր սեփական մտքերն արտահայտելուց:

Հաղորդակցման միջոցով ուսուցիչը պետք է այնպիսի արժեքներ սերմանի աշակերտների մեջ, որ նրանք այդ արժեքներով ապրեն իրենց ողջ կյանքում: Շփումն ու հաղորդկացումը մարդուն ուղեկցում են իր ողջ կյանքի ընթացքում և եթե դպրոցից սկսած հաղորդակցման դերը կարևորվի և օգտագործվի հենց դասասենյակից սկսած, ապա տվյալ

աշակերտն իր կյանքի հետագա փուլերում կկարողանա իր տեղը գրավել շրջապատի մեջ և կայուն ապագա ստեղծել: Եթե երեխան գիտելիքի հետ մեկտեղ նաև ունենա ճիշտ հաղորդակցվելու կարողություն, ապա վստահաբար կյանքում իր տեղը կկարողանա գրավել:

Կրտսեր դպրոցական տարիքը բնութագրվում է նրանով, որ երեխան ձեռք է բերում նոր կարգավիճակ՝ նա դառնում է աշակերտ, իսկ առաջատար գործունեությունը խաղից փոխվում է ուսման: Կրթական գործունեությունը սոցիալական նշանակություն ունի և երեխային դնում է նոր դիրքում մեծահասակների և հասակակիցների նկատմամբ, փոխում է նրա ինքնագնահատականը և վերակառուցում հարաբերությունները ընտանիքում[2]:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն [3] : Աշակերտն ուսուցչի հետ հաղորդակցվելու միջոցով և՛ տվյալ առարկայի վերաբերյալ է գիտելիքներ ձեռք բերում, և՛ կարողանում է սովորել ճիշտ հաղորդակցվելու կանոնները, կարևոր է շփումը դասընկերների հետ, որի ընթացքում էլ աշակերտը կարող է շատ բաներ յուրացնել: Ուսուցչի դերը կարևորվում է նաև այն հարցում, որ նա պետք է դասապրոցեսն այնպես կազմակերպի, որ դասարանում առանձնացած աշակերտներ չլինեն: Սա մեծապես կախված է նրանց դասապրոցեսի մեջ ներգրավվելու հարցից, եթե այդ աշակերտները մասնակցեն դասերին, հարցեր տան, այսինքն՝ ինտերակտիվ շփման մեջ լինեն իրենց ուսուցչի ու դասընկերների հետ, ապա հեշտ կլինի նրանց հարմարեցնել միջավայրին և որոշ չափով դուրս բերել ինքնամփոփ երեխայի կարգավիճակից:

---

[2] Гонина О.О. «Психология младшего школьного возраста», Москва, 2020

[3] Ասատրյան Զ. «Տարրական կրթություն մանկավարժություն», Երևան, 2011թ, էջ 35

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է նաև երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր, ձևավորել գեղեցիկ խոսքն օգտագործելու պահանջմունք: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է: Պետք է նշենք, որ երեխայի կրտսեր դպրոցական տարիքին անցումը ընթանում է ճգնաժամային իրավիճակներով, որը կոչվում է 7 տարեկանի ճգնաժամ: Երեխան այս տարիքում սկսում է իմաստավորել սեփական ապրումները, ինչի շնորհիվ փոխվում է նրա վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ: Ա. Ն. Լեոնտևը 7 տարեկանի ճգնաժամը բացատրում է նոր առաջատար գործունեությանը և դրանով պայմանավորված նոր սոցիալական հարաբերություններին անցնելու վաղաժամ կամ ուշացած լինելու հանգամանքով, եթե երեխան ժամանակին անցնում է գործունեության նոր տեսակին, այսինքն՝ հոգեբանորեն պատրաստ է լինում նոր գործունեությանը, ճգնաժամն ի հայտ չի գալիս[4]:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները հաղորդակցման միջոցով ձեռք են բերում բազում գիտելիքներ, գաղափարապես զարգանում են, առաջնորդվում են հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով: Այս ամենում իր անկյունաքարային նշանակությունն ունի ուսուցիչը, նրա աշակերտի հետ շփվելու հմտությունները և յուրաքանչյուր աշակերտին առանձնահատուկ ուշադրություն դարձնելու կարողությունը:

Հաղորդակցումն ու շփումը յուրաքանչյուրի կյանքում առաջնային է և հենց այդ հատկանիշների շնորհիվ են մարդիկ կարողանում առաջընթաց ունենալ և հասնել իրենց առջև դրած նպատակներին:

---

[4] Խուդոյան Ս. Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները»-Երևան: Զանգակ – 97, 2004, 43 էջ

ԳԼՈՒԽ 2. Ճիշտ հաղորդակցվելու առանձնահատկություններն ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հաղորդակցական հմտությունները՝ որպես սոցիալական ադապտացիայի միջոց, համարվում են կրտսեր դպրոցական տարիքի երեխայի հոգեբանական առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցական տարիքը տարբեր սեռի երեխաների միջև շփման մշակույթն է, հաղորդակման և խոսքային կարողությունների ձևավորումն է, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների կառուցումն է: Երեխան, դպրոց հաճախելով, շփվելով ուսուցչի և իր հասկակիցների հետ ձևավորում է իր մարդկային հարաբերությունները:

Կրտսեր դպրոցական տարիքը ստեղծում է մեծ հնարավորություններ անձի բարոյական որակների և դրական գծերի ձևավորման համար: Բարոյական վարքի հիմքը դրվում է դպրոցում՝ կրտսեր դպրոցական տարիքում [5] : Յուրաքանչյուր երեխա ունի իր բնավորության առանձնահատկությունները և հարաբերություններ կառուցելիս նրանք հանդես են գալիս մի կողմից որպես ակտիվ, մյուս կողմից որպես պասիվ կողմ: Դպրոց մուտք գործելիս այս երկու բնավորությունները կարող են միմյանց բախվել, այս ամենից խուսափելու համար ուսուցիչը նախ պետք է մանրակրկիտ ուսումնասիրի յուրաքանչյուր աշակերտի բնավորության առանձնահատկությունները, փորձի նրանց հետ շփման ճիշտ ուղիներ գտնել և դասարանում ստեղծի այնպիսի մթնոլորտ, որի դեպքում դասարանի յուրաքանչյուր աշակերտ իրեն կարևորված և հասկացված կզգա, դասարանում բոլորը պետք է լինեն հավասար: Այստեղ ուսուցիչը կարող է գործի դնել նաև մանկավարժի հոգեբանությունը, բարդ բնավորություն ունեցող աշակերտների հետ դասերից դուրս զրույցներ անցկացնի, փորձի նրանց ճիշտ հարաբերվելու ուղիները ցույց տալ և դասարանում ստեղծի համերաշխության մթնոլորտ:

Օրինակ՝ դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբում ներառել ինքնամփոփ և ակտիվ աշակերտներ, նրանց հանձնարարել նույն առաջադրանքը և ասել, որ խումբը պետք է գործի միասնական, իսկ նրանց կատարած աշխատանքն արժանանալու է մեկ գնահատականի: Այս ձևով ուսուցիչն աշակերտների մեջ կձևավորի թիմային մտածելակերպ, կտա միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորություն և դասարանում կձևավորի մեկը բոլորի, բոլորը մեկի համար սկզբունքը:

Ուսումնառության գործընթացում ուսումնական և գործունեության մյուս տեսակների միջոցով աստիճանաբար ձևավորվում են կրտսեր դպրոցականի անձնային որակները, որոնք շարունակում են զարգանալ նաև հետագայում: Այս տարիքի երեխաներն ամբողջությամբ ընդունում են մեծահասակի հեղինակությունը և անվերապահորեն հավատում նրա գնահատականին: Այս տարիքի երեխաներն առանձնապես հակված չեն մտածելու դժվարությունների և բարդությունների մասին, ուստի կարևոր է նրանց կողմից հաջողության հասնելու գիտակցված նպատակադրումը և ուսուցչի կողմից դրա արժևորումը: Ինչքան շատ երեխային ոգևորես, ցույց տաս նրա ուժեղ կողմերը, փորձես ուղղել առկա բացթողումները, այնքան նա հետագայում կկարողանա բաց լինել հասարակության առաջ, ունենալ սեփական կարծիք և չվախենալ այն արտահայտելուց:

Կրտսեր դպրոցականների ևս մեկ առանձնահատկություն կա, որը հնարավորություն է տալիս ավելի լավ լուծել հաղորդակցման կարողությունների ձևավորման խնդիրը, որը միջոց է նրանց սոցիալական ադապտացիան իրականացնելու համար: Երեխաները չեն կորցրել իրենց հետաքրքրությունը խաղի նկատմամբ, և դա հնարավորություն է տալիս ուսուցման գործընթացը կազմակերպել յուրօրինակ և հետաքրքիր: Խաղը կարելի է նաև օգտագործել ինչպես հաղորդակցական կարողությունների ձևավորման, այնպես էլ ճիշտ սոցիալական վարք ձևավորելու համար: Ուսուցիչը կարող է այդ ամենը կազմակերպել խաղերի միջոցով, որոնք կօգնեն առկա գիտելիքներն ամրապնդել և հաղորդակցական կարողություններ ձևավորել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դրանից դուրս:

---

[5] Подласый. И. Петагогика: обшие основы. Процесс обучения. М., 2000, 111с

Օրինակ՝ ֆիզկուլտուրայի դասաժամին աշակերտներին բաժանել երկու թիմի և յուրաքանյուրին սահմանված ժամանակով հանձնարարություն տալ, որի ժամանակ թիմերից մեկական մասնակիցներ պետք է մոտենան և հնարավորինս արագ կատարեն տվյալ վարժությունը: Այս խաղի ժամանակ թիմակիցները պետք է ոգևորեն և երկրպագեն նրանց, իրենց խոսքերով առաջ մղեն խաղի մասնակցիներին, որն էլ խաղում կբերի հաղթանակի: Այս միջոցով աշակերտների մոտ կստեղծվի ակտիվ և անմիջական մթնոլորտ և որպես խրախուսանք հաղթող թիմը կպարգևատրվի նվերներով: Այս մեթոդի միջոցով և՛ դասը հետաքրքիր կանցնի, և՛ նույնիսկ ամենալռակյաց աշակերտն այդ ոգևորության ալիքի ներքո կլինի իր թիմակիցների կողքին և կցանկանա վայելել հաղթանակի բերկրանքը:

Եթե քիչ են խրախուսում երեխայի հաջողությունները և ավելի շատ պատժում են նրան անհաջողությունների համար, ապա նրա մեջ ձևավորվում և ամրապնդվում է անհաջողություններից խուսափելու դրդապատճառը, իսկ հակառակ դեպքում ձևավորվում է հաջողություններին հասնելու դրդապատճառը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ կրտսեր դպրոցականի պատկերացումներն «ինքն իր մասին» սերտորեն կապված են սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի, այսինքն՝ ինքնագնահատականի հետ: Երեխայի ինքնագնահատականի հարցում կարևոր է նաև ուսուցչի դերը և նրա հետ փոխհարաբերվելու ուղիները:

Ներկայիս ժամանակներում հաղորդակցման դերն ավելի է կարևորվում, քանզի հենց այդ տարիքից երեխաները սկսում են օգտվել համացանցից, իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում են օնլայն հարթակում և սկսում են ապրել վիրտուալ կյանքով: Սա բավականին մեծ չարիք է՝ մասնավորապես այն պարագայում, երբ ծնողները պարզապես չուզենալով երեխաներին նեղացնել, նրանց թույլ են տալիս սահմանված ժամանակից շատ օգտվել համացանցից և շատ դեպքերում առանց ծնողների իմացության երեխաները ներգրավվում են այնպիսի խաղերի մեջ, որոնք գուցե նաև ազդեն նրանց կյանքի որակի վրա: Հենց դպրոցը, ուսուցիչը և դասընկերներն են, որ կարող են այդ աշակերտներին զերծ պահել վիրտուալ դաշտ մտնելու գաղափարից, պետք է դեռ կրտսեր

դպրոցական տարիքից զրույցներ ունենալ երեխաների հետ, նրանց բացատրել մարդկանց հետ իրական շփման անհրաժեշտությունը, օնլայն հարթակի բերած վտանգավոր հետևանքները: Նմանատիպ զրույցներ պետք է լինեն նաև երեխաների ծնողների հետ, քանզի դպրոցից դուրս տվյալ երեխայի վարքին և սովորույթներին պետք է հետևի ծնողը: Ճիշտ և համակարգված գործելու պարագայում կարելի է հասնել ցանկալի արդյունքի և երեխաներին հետ պահել սխալ ճանապարհից:

Այս ամենի հետ մեկտեղ քիչ չեն նաև այն երեխաները, որոնց ընտանիքներում մինչև որոշակի տարիքի հասնելը չի թույլատրվում համացանց մուտք գործելը, նրանք կենտրոնացած են դպրոցում իրենց դասերի վրա և ծնողների ու ուսուցիչների օգնությամբ կարողանում են և՛ ճիշտ մարդկային արժեքներ յուրացնել, և՛ իրենց տրված ինֆորմացիան հեշտությամբ կլանել:

Ցանկացած պարագայում ինչպիսի նախասիրություններ էլ ունենա աշակերտը, ուսուցիչը պարտավոր է բոլորին հավասար վերաբերմունք ցույց տալ, իր գիտելիքները փոխանցել հետաքրքիր ու ժամանակակից մեթոդներով և աշակերտների համար հարթել կյանքի ճիշտ ուղի:

Կրտսեր դպրոցականի հետ աշխատելիս բարոյական նորմի պահպանումը պետք է առաջնային լինի, դեռ դպրոցական տարիքից երեխաները շփվելով իրենց հասակակիցների հետ ձեռք են բերում մի շարք առանձնահատուկ բնավորության գծեր, որոնք հետագայում ուղեկցում են նրանց ողջ կյանքի ընթացքում և հնարավորություն են տալիս հասարակության մեջ պահել իրենց դիմագիծը:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքում դրվում է բարոյական վարքի հիմքը, յուրացվում են բարոյական նորմերը և վարքի կանոնները, ձևավորվում է անձնավորության հասարակական ուղղվածությունը: Բարոյական գիտելիքները, պատկերացումները և դատողությունները տարիքի վերջում նկատելիորեն հարստանում են, դառնում ավելի գիտակցված, բազմակողմանի ու ընդհանրացված[6]:

[6] Թունյան Զ.Ե. Երիցյան Լ.Մ «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն», Երևան, 2013թ, 106 էջ

Եզրակացություն

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է ուսումնական գործունեության առավել պատասխանատու փուլ, ուստի այստեղ առավել կարևորվում է ուսուցչի ճիշտ հաղորդակցումն աշակերտների հետ, նրանց բնավորության առանձնահատկությունների ուսումնասիրումն ու շրջապատում նրանց դիրքի ամրապնդումը: Այս տարիքում կարևորվում է նոր գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերումը, հասակակիցների և ուսուցչի հետ հաղորդակցման դերի նշանակությունը և դրա կիրառումն առօրյա կյանքում: Կրտսեր դպրոցական տարիքում հաղորդակցումը նաև մեծ ազդեցություն ունի աշակերտների ինքնագնահատականի, ինքնահաստատման, սեփական «ես»-ի գիտակցման գործում:

Կրտսեր դպրոցական տարիքում ձևավորվող և զարգացող հաղորդակցական ունակությունների վերաբերյալ առկա տեսական և գործնական մոտեցումների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ հաղորդակցական ունակությունների ձևավորման աստիճանն ազդում է ոչ միայն երեխաների կրթության արդյունավետության վրա, այլ նաև նրանց սոցիալականացման և անձի ամբողջական զարգացման վրա: Ուսուցչի կիրառած մեթոդները, խմբային աշխատանքները, թիմային մտածելակերպի ձևավորումն օգնում է աշակերտներին դասարանի մի մասնիկը լինել, ազատ և անկաշկանդ շփվել հասակակիցների հետ, կարողանալ վերցնել անհրաժեշտ տեղեկատվություն և այն հետագայում կիրառել կյանքում:

Կարևոր է նաև այն փաստը, որ հաղորդակցման և շփման միջոցով աշակերտները հնարավորինս զերծ են մնում վիրտուալ կյանքից, դրանից բխող վտանգներից և վատ սովորույթներից: Այս ամենի ճանապարհին երեխային պետք է ճիշտ խորհրդատու և այդ առաքելությունն ուսուցչինն է:

Շատ կարևոր է, որ ուսուցիչն ինքը ուսումնասիրած և բացահայտած լինի այն խոչընդոտները, որոնք հնարավոր է հանդիպեն երեխային դեռ

կրտսեր դպրոցական տարիքից, և հենց ձեռք բերած գիտելիքների շնորհիվ էլ ուսուցիչը կկարողանա նրանց ճիշտ ուղու վրա դնել, նրանց մեջ սերմանել այն արժեքները, որոնք կյանքում կարևոր են և որոնք նրանց հնարավորություն կտան կյանքում առաջ ընթանալ:

Այսպիսով կրտսեր դպրոցականի կյանքի ուղին սկսում է զարգանալ հենց դպրոցից և այստեղ ստացած յուրաքանչյուր գիտելիքը և լսած յուրաքանչյուր խոսքը նրանց համար կարող է որոշիչ լինել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ասատրյան Զ. «Տարրական կրթություն մանկավարժություն», Երևան, 2011թ, էջ 35

2. Թունյան Զ.Ե. Երիցյան Լ.Մ «Կրտսեր դպրոցականի հոգեբանություն», Երևան, 2013թ, 106 էջ

3. Խուդոյան Ս. Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները»- Երևան: Զանգակ – 97, 2004, 43 էջ

4. Гонина О.О. «Психология младшего школьного возраста», Москва, 2020

5. Коноваленко, М. Ю. Теория коммуникации: учебник для бакалавров, Москва, 2023

6. Подласый. И. Петагогика: обшие основы. Процесс обучения. М., 2000, 111с